

ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՀԱՅԱԳԵՏԸ

(Գուրգեն Սեվակի ծննդյան 60-ամյակը)

Ապրիլի 28-ին լրացավ ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, Սրեանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի վարիչ, վաստակավոր հայագետ Գուրգեն Սեվակի կյանքի վաթսուհին և գիտա-մանկավարժական գործունեության երեսունհինգ տարին:

Գուրգեն Գրիգորի Սեվակը (Գրիգորյան) ծնվել է 1904 թ. Թբիլիսիում, կոշկակար բանվորի ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է Թբիլիսիի վաճառի դպրոցում, ապա 1914 թվականին ընդունվել է 1924 թ. ավարտել է Ներսիսյան դպրոցը:

Վրաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո (1921) պատանի Գուրգենը գործոն մասնակցություն է ունեցել Թբիլիսիի աշակերտության հասարակական կյանքին, եղել է այնտեղի հայկական դպրոցների կուլտուրական միջոցառումների ակտիվ կազմակերպիչներից մեկը: 1924 թ. հունվարին «Մարտակոչում» լույս տեսավ նրա «Լենին» բանաստեղծությունը, որպես Վ. Ի. Լենինի մահվան ծախս ապրումների առաջին դրական արձագանքներից մեկը (դա էլ Գուրգեն Սեվակ կեղծանվան հրապարակային բեմելն էր): Սկսած 1924 թ. Սրեանի համալսարանի ուսանող Գուրգեն Սեվակը, որպես լեզվագետ, բանաստեղծ-գրականագետ, երիտասարդ ակտիվիստ և խոսքերանության շարժման ղեկավար, ճանաչված անուն է: 1925-ից մինչև 1930 թվականը նա Հայաստանի պրոլետարական ուսանողության կենտրոնական բյուրոյի քարտուղարն էր:

1929 թ. Գ. Սեվակին ընդունվում է ասպիրանտուրա և նույն թվականից սկսում է դասախոսել: 1932 թ. նա ընտրվում է Հայաստանի գիտական աշխատողների սեկցիայի պատասխանատու քարտուղար, նշանակվում է հանրապետական տերմինաբանական կոմիտեի գիտ. քարտուղար և նորաստեղծ մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի լեզվաբանական սեկցիայի ղեկավար:

Սրեանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնում նախ՝ որպես դասախոս, ապա՝ 1941 թ. որպես ամբիոնի վարիչ 35 տարի անընդմեջ պաշտոնավարելուց բացի, պրոֆ. Սեվակը երկար տարիներ համատեղությամբ աշխատել է նաև Արմֆանում, ակադեմիայի լեզվի ինստիտուտում, Սրեանի և Լենինականի հայկական մանկավարժական ինստիտուտներում, ինչպես նաև Թբիլիսիի պետհամալսարանի և Բաքվի մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժիններում իրրև դասախոս:

Հարուստ է բանաստեղծ-թարգմանիչ Գուրգեն Սեվակի գործունեությունը: Սկսած 1922 թ. նա հայ գրականության լավագույն նմուշները հմուտությամբ թարգմանում է խոսքերանո միջազգային լեզվով՝ դրանք դարձնելով համաշխարհային ընթերցողների սեփականությունը: Նա ուսերենից հայերենի է թարգմանել Լեոնտոսովի, Պուշկինի ստեղծագործություններից. նրան է պատկանում «Սվզների օնեգին» ծավալուն պոեմի հայերեն առաջին ամբողջական թարգմանության պատիվը:

Այս ամենը լիանգարեցին ընկ. Սեվակին՝ դառնալու անվանի գիտնական-մանկավարժ: 1937 թ. ՀՍՍՌ լուսժողովմամբ նրան շնորհել է դոցենտի կոչում, 1940 թ., դիսերտացիայի փայ-



լուն պաշտպանությամբ, ստացել է գիտությունների թեկնածուի աստիճան, իսկ 1948 թ. իր «Ժամանակակից հայոց լեզվի համառոտ պատմություն» արժեքավոր աշխատության համար ստացել է բանասիրական գիտությունների գոկտորի աստիճան, այնուհետև նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Աշակերտելով հուշակավոր հայագետներ Հր. Աճառյանին ու Մ. Արեղյանին՝ Գ. Սեվակը անսպառ գիտելիքներ ձեռք բերեց և խորանալով լեզվի փիլիսոփայության մեջ ու մասնավորապես յուրացնելով լեզվի մարքսիստական փիլիսոփայությունը՝ այս բնագավառում առաջ անցավ իր ուսուցիչներից և դարձավ նշանավոր հայ մարքսիստ լեզվաբան: Սկսած «Հանուն մարքսլենինյան լեզվարանության» (1932) և «Լենինն ու դիալեկտիկական օրինաչափությունները լեզվի մեջ» (1935) ուսումնասիրություններից մինչև նրա վերջին աշխատությունները՝ ընդհանուր լեզվաբանական և հայագիտական հարցերում մարքսիզմը ներդնելու լավագույն օրինակներ են: Գուրգեն Սեվակը Ն. Մառի լեզվի «նոր ուսմունքի» առաջին քննադատողներից մեկը եղավ (տե՛ս «Գրական թերթ», 1932, N 8): Պրոֆ. Սեվակի գրչին են պատկանում ավելի քան 50 անուն գիտական աշխատություններ: Նա հեղինակ է լուսական երկու ձեռնարկների, նրա շարահյուսության դպրոցական դասագիրքը 28 տարի շարունակ եղել է ու մնում է որպես սիրված դասագիրք: Նա հիմնադիր է մի քանի հայագիտական դիսցիպլինների՝ հայ ոճագիտություն, արևելահայ գրական լեզվի պատմություն, ժամանակակից հայ լեզվի շարահյուսության դասընթաց: Հայն են պրոֆ. Գ. Սեվակի գիտական ընդդրված սահմանները, նրա աշխատությունները պատասխան են տալիս լեզվի փիլիսոփայության, անհայտության բողոք ծածկված հայոց գրի սկզբնաղբյուրների ամենաբարդ հարցերին ու միաժամանակ՝ հայերենի այս կամ այն բառի գրության մասին:

Դժվար է գերազնահատել Գուրգեն Սեվակի ծառայությունները ժամանակակից հայերենի լեզվաշինության և տերմինաբանության գործում: Նա հայերենի մաքրության ու անաղարտության ճանաչված նախանձախնդիրներից է: Պրոֆ. Սեվակը հայոց լեզվի նորմավորման, տերմինաբանության ու տառադարձության բազմաթիվ սկզբունքների ու նախագծերի հեղինակ է:

Պրոֆ. Սեվակը նաև անվանի դասախոս-մանկավարժ է: Նա ուսուցիչների, գրողների ու քննադատների, ժուռնալիստների ու գիտնականների տասնյակ սերունդներ է դաստիարակել: Նրա ընտրած ու աճեցրած մոտ 40 ասպիրանտներից շատերը աշխատում են րուհերում և ակադեմիայում, որոնց մեջ կան ակադեմիայի թղթակից-անդամներ, դոկտոր-պրոֆեսորներ և բազմաթիվ դոցենտ-թեկնածուներ: Նա նրբանկատ ու հոգատար, բայց և բժախնդիր ու պահանջկոտ ուսուցիչ է:

Ի հատուցումն այս ամենի, պրոֆ. Սեվակը 1956 թ. ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, իսկ 1961 թ. կառավարությունը նրան շնորհել է գիտությունների վաստակավոր գործչի կոչում:

Պրոֆ. Սեվակը թեև վաթսունամյա, երիտասարդի պես շարունակում է անհատնում եռանդով պրոպագանդել հայագիտությունը՝ ամենուրեք և վրացագիտությունը՝ Հայաստանում: Նա հայրենասեր ու հայերենասեր գիտնական-մանկավարժի նախանձելի օրինակ է:

Կյանքի լայն ճանապարհ է դեռ սպասում մեր սիրելի հորեկարին՝ մայրենի դպրության անընկճելի զինվորին:

Զ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

* * *

ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիրը» սրտանց ողջունում է իր խմբագրական կոլեգիայի հին ու գործունյա անդամին: Ստեղծագործական նորանոր հաջողությունների և բաշտողություն 2 եզ, ընկեր Սեվակ: